Ճապոնացին ոչ աչքն է խնայում, ոչ էլ ջանք այդ տեսակ մանրակրկիտ աշխատանքի համար: Դա է պատճառը անշուշտ, որ ես ոչ մի տեղ այնքան շատ ակնոցաւոր չեմ տեսել, ինչպէս Ճապոնում:

Մանուածքների վաճառականի մօտից ես ընկայ հազուագիւտ իրեր ծախողի խանութը: Նա նորից շարեց առջեւս իր բրօնզէ ու կլուազօնէ իրերը եւ սկսեց բացատրութիւններ տալ: Հէնց այդտեղ իսկ դուք տեսնում էք կլուազօնի պատրաստութեան ամբողջ բարդ ու մանր աշխատանքը: Մարդ ուղղակի հիանում է խանութպանների թէ ձեզ եւ թէ իրար հետ ունեցած սիրալիր վարմունքից: Ոչ մի կոպիտ խօսք չի հասնիլ ձեր ականջին, ու ձեր աչքերը կը տեսնեն միայն զուարթ դէմքեր: Ձեր բոլոր ցանկութիւնները կատարում են: Մի տեսակ իրանք են ներողութիւն խնդրում, եթէ ձեր պահանջած զիջումը չեն կարող անել եւ ստիպւած են մերժելու:

⁂

Կանգնած սպասում էի տրամւային, էլեքտրաքարշին:

Նա դուրս սլացաւ յանկարծ մօտակայ փողոցից: Կօնդուկտօրը յամառ նայում էր առաջ, իր տեղը կանգնած, ակնոցը քթին, որ նրա առանց այն էլ կենդրոնացած դէմքին մի ինչ-որ պրօֆէսօրական արտայայտութիւն էր տալիս:

Նստեցի:

Տրամւայում ծանօթութիւնը հեշտ է կապւում:

—Օհայո՛, օհայո՛ (բարեւ),— լսւում է երկու կողմից, եւ ուրախ ժպիտներ դիմաւորում են քեզ, հէնց որ ներս ես մտնում:

Եւ սկսւում է խօսակցութիւն, ուրախ ու ծիծաղկոտ, եւ